ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

« ԿԳՄՍ Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ

Հերթական ատեստավորման ենթակա

Ուսուցիչների վերապատրաստում

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ **Ուշադրության զարգացումը խաղի միջոցով**

Անցկացման վայրը՝ **Մարտունի**

Աշխատանքի ղեկավար՝ **Հասմիկ Բեյբության**

Ուսուցիչ՝ **Լալա Խաչատրյան**

Դպրոց՝ **ՀՀ Գեղարքունիքի մարզի "ԱՐԾՎԱՆԻՍՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ"**

Մարտունի 2022

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 3

1. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ 5

2. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ 7

3. ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ.....8

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 13

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 15

ԴԱՍԱՊԼԱՆ 1 16

ԴԱՍԱՊԼԱՆ 2.....19

Ներածություն

Տարրական դպրոցում դասավանդելիս խնդիրները բազմակի են և ամեն անգամ առնչվում ես նոր խնդիրների:Կրտսեր դպրոցական տարիքում երեխաներին բնորոշ են առանձնահատկություններ, որոնք հանդիսանում են նախադպրոցական տարիքի օրգանական շարունակությունը: Կրթական գործունեությունը պահանջում է բարձրագույն հոգեկան գործառույթների՝ մտածողության, ուշադրության, հիշողության, երևակայության ինքնաբերական զարգացում:

Երեխան սկսում է տիրապետել հատուկ գործողությունների, որոնք հնարավորություն են ընձեռում կենտրոնանալ կրթական գործընթացի վրա, հիշողության մեջ պահպանել տեսածը կամ լսածը, պատկերացնել որևէ բան, ինչը նախկինում չի տեսել: Եթե նախադպրոցական տարիքում խաղային գործունեությունն էր պայմանավորում բարձրագույն հոգեկան գործընթացների զարգացումը, ապա կրտսեր դպրոցական տարիքում այդ դերը բաժին է ընկնում կրթական գործընթացին:

Այս տարիքում զարգանում է ուշադրությունը: Ուշադրությունը, արթունության ակտիվ վիճակ է, ընկալման ընտրողական ուղղվածություն, որը բնութագրվում է օրգանիզմի պատրաստակամությամբ՝ պատասխանելու ազդակին և արտահայտվում որոշակի օբյեկտի նկատմամբ հոգեկան գործունեության ուղղվածությամբ, որն անհատի համար ունի հաստատուն կամ իրավիճակային նշանակություն:

Կախված անհատի գիտակցական ընտրությունից և կարգավորման առանձնահատկություններից՝ առանձնացվում են կամային, ոչ կամային և հետկամային ուշադրության տեսակներ:

Ոչ կամային ուշադրությունը բնածին գործընթաց է, իրականանում է օրգանիզմի վրա որոշակի ուժի գրգռիչի ազդեցության ժամանակ և մարդուց հատուկ ջանքեր չի պահանջում: Հասարակական գործունեության ընթացքում մարդը կարողանում է կառավարել իր ուշադրությունը: Ուստի մարդու կամքին ենթարկվող ուշադրությունը կոչվում է կամային: Դասի ընթացքում ուսուցիչը երեխայի ուշադրությունը հրավիրում է ուսումնական նյութի վրա, տևականորեն պահում է , տեղափոխում է աշխատանքի մի ձևից մյուսին: Նախադպրոցականի հետ համեմատած, կրտսեր դպրոցականներն ավելի ուշադիր են: Նրանք արդեն կարողանում են կենտրոնացնել իրենց ուշադրությունը ոչ այնքան հետաքրքիր գործունեության վրա , բայց նրանց մեջ այնուամենայնիվ գերակշռում է ոչ կամային ուշադրությունը:

Նրանց համար արաքին տպավորություններն ուժեղ , շեղող գործոններ են: Նրանց դժվար է կենտրոնանալ անհասկանալի , բարդ նյութի վրա: Ուշադրությունն աչքի է ընկնում ոչ մեծ

ծավալով:Կրտսեր դպրոցականը միևնույն աշխատանքի վրա կենտրոնացնում է իր ուշադրությունը 10-20ր:
Բայց եթե երեխան չի կարողանում կենտրոնանալ, դա չի նշանակում, որ նա տառապում է ուսման որևէ խանգարումով :
Հաշվի առնելով սովորողների, հատկապես փոքր տարիքի, համեմատաբար արագ հոգնածությունը, ուշադրությունը շեղող գործոնները մանկավարժները խորհուրդ են տալիս փոխել աշխատանքի մոտեցումը և կիրառել մեթոդների բազմազանություն: Հարկավոր է երեխաների մեջ արթնացնել հետաքրքրություն և այդ կերպ նպաստել մանկավարժական խնդիրների լուծմանը:Մանկավարժության և հոգեբանության տեսաբանները գտնում են, որ երեխայի հոգեբանությունը , անհատականությունը առաջին հերթին ցայտուն և անմնացորդ արտահայտվում են խաղի մեջ: Խաղով է երեխան ճանաչում երևույթի շատ կողմեր, որոնք ի հայտ են գալիս միայն խաղային իրավիճակում:
Որպեսզի կարողանանք սովորողներին ներգրավել դասի մեջ, պետք է կիրառել հետաքրքրաշարժ ու ուշադրությունը զարգացնող խաղեր, : Տրամաբանական և հետաքրքրաշարժ խաղերը հետաքրքրում են երեխաներին:
Կենտրոնացման բացակայությունը ,ցրվածությունը երեխաների շրջանում շատ տարածված խնդիր է:
Այդ իսկ պատճառով էլ որոշեցի ինձ համար որոշ բացահայտումներ անել և խնդիրը ուսումնասիրել խորքային:
Հետազոտությանս նպատակը դարձավ աշակերտների ուսման նկատմամբ հետաքրքրասիրության պակասի,ցրվածության, կենտրոնացման բացակայության , անտարբերության նախադրյալների բացահայտումը:

Հետազոտության խնդիրները՝

ո՞րն է պատճառը, որ սովորողների մոտ ուսման նկատմամբ հետաքրքրասիրության պակաս է նկատվում

բացահայտել աշակերտների ցրվածության,անուշադրության բուն պատճառները

բարձրացնել ուսման նկատմամբ հետաքրքրասիրությունը

Հետազոտական փուլերը `

փորձարարական հետազոտության իրականացում

մեթոդիկաների ճիշտ ընտրություն

ստացված արդյունքների գրաֆիկական վերլուծություն

Հետազոտության արդյունքների ամփոփում

Գրականության ակնարկ

Գիտակցության մեջ ոչինչ չկա, ինչը չլիներ նաև զգայություններում : Սրանից ելնելով՝Ջ. Լոկը ապացուցել է, երեխայի հոգեկանը ձևավորվում է միայն կյանքի ընթացքում: Հանդես գալով Դեկարտի դեմ, ով իր ճանաչողության տեսությունը հիմնավորել է մարդու մոտ բնածին գաղափարների առկայությամբ, Լոկն ապացուցել է այդ դրույթի սխալականությունը. «Եթե գաղափարները բնածին լինեին, նրանք հայտնի կլինեին և՛ մեծահասակին, և՛ երեխային: Այս պարագայում դժվար չէր լինի երեխայի մոտ մաթեմատիկայի, լեզվի, բարոյական նորմերի մասին գիտելիքների ձևավորումը: Բայց բոլոր դաստիարակները գիտեն, որ երեխաներին գրել-կարդալ սովորեցնելը դժվար է, ընդ որում, տարբեր երեխաներ նյութը յուրացնում են տարբեր արագությամբ»:(Ջ. Լոկ)

Ոչինչ,ոչ մեր խոսքերը, ոչ մտքերը, ոչ էլ նույնիսկ մեր գործողություններն այնքան հստակ և հավատարմորեն չեն արտահայտում ինքներս մեզ և մեր հարաբերությունն աշխարհի հետ, որքան մեր զգացմունքները. նրանք լսում են ոչ թե առանձին մտքի, ոչ թե առանձին որոշման, այլ մեր հոգու ամբողջ բովանդակությունը և կառուցելով այն : (Կ. Դ. Ուշինսկի)
Ուշադրությունը, որպես համակարգված վարժություն, զարգացնում է երեւակայությունը, այն դառնում է ավելի ճկուն եւ շարժական:
(Չեխով Միխայիլ Ալեքսանդրովիչ)
Ուշադրությունը օգնում է նկատել իրականությունը «այստեղ եւ հիմա»:
(Ռուբեստեյն Նինա Վալենտինովնա)
Հոգեբանական երեւույթների համակարգում ուշադրությունը գրավում է հատուկ պաշտոն: Այն ընդգրկված է բոլոր մյուս հոգեբանական գործընթացներում, գործում է որպես դրանց անհրաժեշտ տարր:
(Սոլոմին Վալերի Պավլովիչ)
Ուշադրությունն ամեն ժամ է, ամեն րոպե հազարավոր արտաքին խթաններ բարձրանում են մեր աչքերն ու ականջները, հեղեղում են մեր ուղեղը:
(Կեյվին Դուտտոն)
Ինչքան քիչ է ուշադրության օբյեկտների քանակը, ինչպես նաև ընկալման մակերեսը, այնքան կենտրոնացված է ուշադրությունը: Այն ապահովում է ուսումնասիրվող օբյեկտների և երևույթների խորին ուսումնասիրում: Ուշադրության կենտրոնացումը կապված է կեղևում գրգռման դոմինանտ օջախի գործառնության առանձնահատկությունների հետ. կենտրոնացումը դոմինանտ օջախում գրգռման արդյունք է գլխուղեղի կեղևի մյուս շրջանների միաժամանակյա արգելակման դեպքում:

Ուշադրության չափազանց կենտրոնացումը (հիպերպրոզեկսիա) արտահայտվում է ցրվածությամբ, ինչ-որ բանով չափազանց տարվածությամբ, երբ չեն նկատվում այլ ազդակներ, ինչպես արտաքին, այնպես էլ ներքին:

(Ալեքսեյ Ուխտոմսկի)

Ուշադրության էությունը բանականության այս կամ այն օբյեկտի տիրապետումն է կամ մտքերի ուղղվածությունը, գիտակցության կենտրոնացումը և ֆոկուսավորումը: Այն պահանջում է այլ առարկաներից հեռացում մյուսների հետ առավել արդյունավետ փոխազդելու համար: Ստացվում է, որ ուշադրության առաջին գործառույթը որոշակի տպավորությունների, մտքերի կամ առարկաների վրա ֆոկուսավորումն է և շեղումն այլ՝ տվյալ պահին ոչ պետքական մտքերից, առարկաներից:

Գործնական համատեքստ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

- Բացահայտել աշակերտների հետաքրքրությունների պակասը դասապրոցեսին,գտնել ու կիրառել մեթոդներ ,որոնց շնորհիվ աշակերտները չեն շեղվի ու ավելի ակտիվ ,ուշադրությամբ կմասնակցեն դասին:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ

-

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

- Մայրենի

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ –

- Բացահայտել հիմնական պատճառները, որոնք առաջացնում են դպրոցականների մոտ անուշադրություն, ցրվածություն:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

- Խաղ-վարժություն

Փորձարարական հետազոտություն

Խմբի նկարագիր

Հետազոտությունը կատարել եմ Արծվանիստի միջնակարգ դպրոց I-ին դասարան, որտեղ սովորում են 22 աշակերտ:Քանի որ այդ դասարանում աշակերտների մեծ մասը անուշադիր էին և չէին կենտրոնանում դասի ընթացքում, այդ իսկ պատճառով ես որոշեցի օգտագործել դերային խաղ մեթոդը, իմ աշակերտների մոտ զարգացնել տրամաբանական մտածողությունը , ուշադրությունը և հիշողությունը:

Փորձարարական դաս 1

Դասը անցկացրեցի բնականոն գործընթացի սահմաններում: Տնօրենին դիմելուց հետո, մեր ուսուցչի օգնականի հետ սկսեցի իմ սովորական օրվա դասը:

Այսօրվա դասի թեման է <<Գեղարդը>>, ստուգեցի տնային հանձնարարությունները, միասին վերլուծեցինք գտանք թերություններն ու շտկեցինք դրանք: Սկսեցինք ընթերցել դասը շարունակելով, հետո արդեն դերերով: Աշակերտները յուրացրել էին դասը, հարցերի միջոցով ամփոփեցի դասը,մինչ նոր դասին անցնելը նկատեցի ,որ ոչ բոլոր սովորողներն էին հետաքրքրված դասով, կային անհանգիստ երեխաներ,որոնք անուշադիր ,ցվրված նստած էին և անընդհատ դուրս գալու ցանկություն էին հայտնում:

Գրաֆիկական թելադրությունները օգնում են զարգացնել երեխայի միտքը: Խաղը նպաստում է տրամաբանական մտածողության,ուշադրության,հիշողության զարգացմանը: Առաջադրանքը կատարելու համար անհրաժեշտ է ունենալ վանդակավոր տետր,մատիտ և ռետին, նշել ելման կետ ու այդ կետի , թվերի և սլաքի ուղղության օգնությամբ աշխատել: Աշակերտներին բաժանեցի վանդակավոր թերթեր և հրահանգները ստանալուց հետո սկսեցին աշխատել:Աշխատանքն անհատական է: Առաջադրանքը դուր եկավ աշակերտներին,նրանք ակտիվացան,թարմացան և կենտրոնացան:

Այս խաղը մոտիվացրեց երեխաներին: Դասարանում կային աշակերտներ,ովքեր լիդերի դեր էին ուզում ստանձնել, այտեղ այս հատկանիշը դրական ազդեցություն ունեցավ և նրանք ձգտեցին առաջինը լինելու համար ավելի ակտիվ և ուշադիր լինել: Կա աշակերտ ,ով անընդհատ ակիվ է և ցվրված,բայց ի զրմանս ինձ նա կենտրոնացավ ու սկսեց ակտիվ աշխատել:

Փորձարարական դաս 2

Այսօրվա դասի թեման է <<Կռունկը>>, դասը սկսվեց ներկա բացակայով և տնային աշխատանքի ստուգումով: Այնուհետև նախորդ դասի առաջադրանքը կրկնեցինք նույն ձևով՝ դասի արդյունավետությունը պարզելու համար:

Դասը ընթացավ բնականոն հունով, խաղը կիրառեցի դասի անդրադարձի ժամանակ: Այս անգամ աշակերտները հստակ գիտեին իրենց անելիքը: Այն աշակերտները ,ովքեր հասցրել էին առաջին դասին ավարտել առաջադրանքը, ավելի արագ ավարտեցին,նրանք ովքեր կիսատ էին կատարել,ավարտեցին,կային նաև աշակերտներ ,ովքեր այդպես էլ անավարտ թողեցին առաջադրանքը:

Առաջին օրվա արդյունքների վերլուծություն

Առաջադրանքը ավարտին հասցրեցին

•9 աշակերտ

Առաջադրանքը մասամբ կատարեցին9 •10 աշակերտ

Առաջադրանքը ավարտին չհասցրեցին

•3 աշակերտ

Երկրորդ օրվա արդյունքների վերլուծություն

Առաջադրանքը ավարտին հասցրեցին

•14 աշակերտ

Առաջադրանքը մասամբ կատարեցին

•7 աշակերտ

Առաջադրանքը ավարտին չհասցրեցին

•1 աշակերտ

Դասալսողի դիտարկումներ 1

Դասալսողի անուն ազգանուն՝ Ս.Նիկողոսյան

Դասալսման թիրախը (համաձայնեցված ուսուցչի հետ)՝

Սովորողների ուշադրություն

Սովորողի բնորոշող վարքագիծ	Տվյալ վարքագիծը բնորոշող աշակերտների թիվը կամ անունները
Ցուցաբերում է հետաքրքրություն, մասնակցում է դասի ընթացքին	14
Ուշադիր հետևում է դասի ընթացքին	9
Պատասխանում է հարցերի	8
Կատարում է գրառումներ տետրում	17
Պաշտպանում է սեփական տեսակետը	5
Կատարում է տրամաբանական	4

առաջարկներ	
Ընկերներին բացատրում է անհասկանալի հարցերը	2
Անտարբեր է	4

Դասալսողի դիտարկումներ 2

Դասալսողի անուն ազգանուն՝ Ս.Նիկողոսյան

Դասալսման թիրախը (համաձայնեցված ուսուցչի հետ)՝

Սովորողների ուշադրություն

Սովորողի բնորոշող վարքագիծ	Տվյալ վարքագիծը բնորոշող աշակերտների թիվը կամ անունները
Ցուցաբերում է հետաքրքրություն, մասնակցում է դասի ընթացքին	17
Ուշադիր հետևում է դասի ընթացքին	12
Պատասխանում է հարցերի	10
Կատարում է գրառումներ տետրում	19
Պաշտպանում է սեփական տեսակետը	5
Կատարում է տրամաբանական առաջարկներ	4
Ընկերներին բացատրում է անհասկանալի հարցերը	2
Անտարբեր է	2

X աշակերտի դիտարկման քարտ

	Այո	Ոչ	Այլ պատասխան
Դասի թեման հոտաքրքիր էր:	√		
Թեմայի վերաբերյալ հարցեր եմ տվել:		√	
Պատասխանել եմ թեմայի վերաբերյալ հարցերին :	√		
Առաջադրանքը	√		

կատարեցի հեշտությամբ:			
Առաջադրանքը հետաքրքիր էր:	√		
Առաջադրանքը ցանկանում եմ նորից քննարկել:		√	
Կփոխեի՞ր որևէ բան:		√	

Աշակերտների ընդհանուր թիվ՝ 22:




Ավարտված
Մասամբ կատարված
Անավարտ
Օր երկրորդ

Եզրակացություն

Խաղը մարդկային գործունեության ամենահետաքրքիր ձևերից մեկն է, երեխայի զարգացման ու դաստիարակության լավագույն միջոցներից մեկը, որը չպետք է անտեսել: Մաթեմատիկայի դասերին կիրառվող խաղային տեխնոլոգիաները ոչ միայն գիտելիքների ապահովման միջոց են, այլև կարևոր դեր ունեն երեխաների մտածողության զարգացման գործում: Հատկապես համագործակցային մեթոդով անցկացվող խաղերը աշակերտներին մղում են ինքնաճանաչման, համակողմանի զարգացման՝ դասընկերների հետ շփման դաշտ ստեղծելով: Խաղը կազմակերպվում է որպես երեխաների հետ ուսուցչի համատեղ գործունեություն: Նման ձևով ուսուցիչները, օրինակ, երեխաներինս սովորեցնում են, որ առարկաների թիվը կախված չէ նրանց դասավորության ձևից: Երեխաները պետք է կարողանան խմբի մեջ տեսնել տարբեր ձևով դասավորված առարկաների քանակություն, ամրապնդել տարբեր ձևով դասավորված առարկաները հաշվելու ունակությունը, պատկերացում տալ այն մասին, որ յուրաքանչյուր առարկայի գրաված տեղը մյուսների մեջ, փոխվում է՝ կախված նրանից, թե ինչպիսի հատկանիշի հիման վրա է համեմատվում և այլն:

Երբ երեխաների ուշադրությունը, հիշողությունը, հոգեկան մյուս գործընթացները դեռ այդքան զարգացած չեն, և չեն կարող կիրառվել ուսուցման ավելի բարդ՝ դպրոցական մեթոդներ, խաղային տեխնոլոգիաների օգտագործումը լիովին համապատասխանում է նրանց տարիքային առանձնահատկություններին և հոգեկան, մտավոր կարողություններին: Այդ խաղերը՝ որպես ուսուցման ձև, հետապնդում են երկու նպատակ՝ ուսուցողական և խաղային: Երեխաները խաղալով սովորում են և զարգացնում իրենց հոգեկան, մտավոր կարողությունները, իսկ ուսուցիչը, ղեկավարելով խաղը, սովորեցնում է նրանց:

- Այսպիսով՝ ուսումնասիրելով խաղը որպես աշակերտների ուշադրությունը կենտրոնացնելու միջոց եկանք հետևյալ եզրակացության՝
- Երեխաների մեծամասնության անուշադրության պաճառ են հանդիսանում երկար նույն դիրքով նստելը, հոգնածությունը:
- Ելելնելով երեխայի տարիքային առանձնահատկություններից՝ կրտսեր դպրոցական տարիքում աշակերտները ուշադրությունը կարողանում են կենտրոնացնել 10-20 րոպե: Որից հետո անհրաժեշտ է ուշադրությունը կենտրոնացնող խաղ-վարժություններ կիրառել:
- Աշակերտի ուշադրությունը կենտրոնացնելու նախապայմաններից է հանդիսանում լսելու ունակությունը: Եթե աշակերտը չի լսում, ապա դժվարանում է կենտրոնացնել ուշադրությունը հանձնարարված առաջադրանքի վրա:

- Ուսումնական գործընթացում պետք է հաշվի առնել աշակերտների տարիքային առանձնահատկությունները և կիրառել աշակերտի համար ուշադրությունը կենտրոնացնելու մեթոդներ ու հնարներ, որոնց արդյունքում աշակերտները բարձր արձյունավետություն կցուցաբերեն:

Օգտագործվող գրականություն

- 1. Նալչաջյան Ա.Ա. – Ընդհանուր հոգեբանության հիմունքներ
- 2. Պետրովսկի Ա.Վ. Տարիքային և մանկավարժական հոգեբանություն
- 3. ԱՄԻՐԶԱՆՅԱՆ ՅՈՒ., ՍԱՀԱԿՅԱՆ Ա. Մանկավարժություն
- 4. Добрынин Н. Ф. О теории и воспитании внимания // Советская педагогика. — 1938. — № 8. — С. 12-32
- 5. Комарова Т.К. - Психология внимания. Изд.: Гродно, 2002.с 124
- 6. Дормышев Ю. Б., Романов В. Я. Психология внимания. — М: Тривола, 1995. — 357 с
- 7. Ланге Н. Н. Внимание // Хрестоматия по вниманию / Под. ред. А. Н. Леонтьева. — М.: Изд-во МГУ, 1976.-295с.-С. 103-106.
- 8. Վիկիպեդիա ,ազատ հանրագիտարան - https://bit.ly/3kMYe5F
- 9. https://bit.ly/3Fw2FK1

Դասի պլան 1

Դասվար –Լալա Խաչատրյան

Դպրոց - միջնակարգ

Դասարան - II

Առարկա - մայրենի

Դասի թեման - Գեղարդ

Դասի տեսակը - Նոր դասի հաղորդում

Կահավորումը - Եկեղեցու մանրակերտ, նկար , նետ (գեղարդ)

Օգտ. մեթոդները – մտագրոհ, համառոտ դասախոսություն, ուղղորդված ընթերցանություն, քառաբաժան , T աձև աղյուսակ

Դասի նպատակը - 1. կզարգացնեն տեքստը հասկանալով կարդալու կարողությունները

2. ստեղծագործաբար կվերարտադրեն նկարի բովանդակությունը և կհամադրեն բնագրի բովանդակության հետ

3. կընդլայնեն Հայաստանի մասին տեղեկությունների իմացությունը

4. կխորացնեն նախադասության մասին ունեցած գիտելիքները

Ընթացքը - Խթանում՝

Ծրարից հանում են հանելուկը.

Հոյակապ շինություն է ,

Մեջը կամար ու սյուն է,

Գնանք մաքրենք մեր հոգին,

Այն մեր Աստծո տունն է: (եկեղեցի)

Գուշակում են հանելուկը, ապա բացում են արկղիկը և հանում եկեղեցու մանրակերտը:

Մտագրոհ՝

մատուռ վանք

տաճար - *եկեղեցի* - աղոթարան

ուխտատեղ սրբատուն

Ներկայացնում են եկեղեցու կառուցվածքը

(կառույց (ուղղանկյունաձև կամ խաչաձև), գմբեթ, խաչ)

- Ինչ եք կարծում, քանի քար է հարկավոր եկեղեցի կառուցելու համար:

Ընդհանրացնելով պատասխանները ՝ պարզում են, որ շատ քարեր են պետք:

- Պատկերացնում եք, եկեղեցի են կառուցել 1 քարից, հետաքրքիր է:

Իմաստի ընկալում

Դասը բաժանում ենք 3 մասի: Կարդում են յուրաքանչյուր մասը, պատասխանում են հարցերին, բացատրում բառերը (ուղղորդ. ընթ.)

I մաս 1. Որտե±ղ է գտնվում Գեղարդի վանքը:

2. Ինչով էր զարմացնում եկեղեցին:

Բացատրում են - ժայռափոր - ժայռի մեջ փորված

ապշել – զարմանալ

II մաս – 1.Ով է ցանկացել եկեղեցին կառուցել այդ ձորում:

2. Հայ իշխանն ինչպե±ս իմացավ եկեղեցին կառուցելու տեղը:

Բացատրում են - քարհատ – քար հատող, կտրող, քարտաշ

III մաս – 1. Արթնանալով՝ ինչ է տեսնում իշխանը:

2. Ում հետ և ինչպես են կառուցում եկեղեցին:

Գեղարդավանքի նկարը փակցնում են , թեմայի վերնագիրը կրող պաստառին: Նկարի վերևի մասում նկատում են մեկ այլ անուն՝ Այրիվանք: Ուսուցիչը ներկայացնում է վանքի անունները բացահայտող պատմությունը:

Բացատրում են Այրիվանք – (այրից (ժայռից) կերտված վանք)

գեղարդ - նետ, տեգ

Հիսուսին խոցած նետը պահված էր Գեղարդում

Պատմում են բնագրին կից նկարի բովանդակությունը և համեմատում են բնագրի բովանդակության հետ:

Կատարում են առ. 1, 2, 3 –կազմում են բառեր, նախադասություններ:

Կշառադատում - Т –աձև աղյուսակ

Էջմիածին Գեղարդ

Կառ. բազմ. քար.	Կառ. 1 քարից Պռոշ իշխանը

Տրդատ թագ. Ցույց է տվել Քրիստոսը	Ցույց է տվել մի ծերունի

Քառաբաժան՝

Ինչ տեսա Ժայռի վրա քանդակված Գեղարդի վանքը	Ինչ զգացի Զարմացա, որ կարողացել են ժայռը փորել ու եկեղեցի կառուցել
Համառոտ պատմել	Նոր դասի վերնագիր Հրաշք եկեղեցին ժայռափոր վանքը

Դասի պլան 2

Ուսուցիչ –Լալա Խաչատրյան
Առարկա-Մայրենի
Դասարան-2-րդ
Աշակերտների քանակ-22
Դասի թեմա-Կռունկը
Ամսաթիվ՝ 14.04.2022 թ.

Դասի նպատակը Դասի ավարտին աշակերտները կկարողանան	Կարևոր դրույթները Բանալի հասկացությունները, անվանումներ, որոնք աշակերտը պետք է սովորի	Անհրաժեշտ նյութերը, պարագաներ Ի՞նչ է անհրաժեշտ դասի համար-դիդակտիկ պարագաներ դասի ամեն փուլի համար:
Նպատակը Սովորեցնել մի շարք բառերի ուղղագրությունն ու դրանց արտահայտած իմաստները , ամրապնդել թռչունների մասին աշակերտների ունեցած գտելիքները, բառապաշարը հարստացնել նոր բառերով **Կկարողանան** • Նկարագրել աշունը • Բնութագրել կռունկին՝ որպես չվող թռչուն • Բացատրել այս փոքրիկ պատմության իմաստը • Կատարել ստեղծագործական և վերլուծական աշխատանք	Հոգատար, ընտելանալ , ճիչ, ուժգին	**Դասի սկիզբ՝** մեծադիր թեմատիկ նկարներ, չվող և ձմեռող թռչունների պաստառ **Նոր նյութի ներկայացում՝** աշնան և կռունկի նկարներ, **Ուղղորդված աշխատանք՝** գրքեր, տետրեր, գրիչներ, գունավոր մատիտներ, գունավոր թղթեր **Ինքնուրույն աշխատանք՝** գրել փոքրիկ քառատող /հանելուկ/ որսորդի կամ կռունկի մասին կամ նկարագրել

		նրանց **Դասի ավարտ՝** կիրառել քառաբաժան մեթոս / ինչ, տեսա, ինչ լսեցի, ինչ զգացի, նոր վերնագրեր/
Դասարանի, դասի նախապատրաստում Ի՞նչ պետք է լինի դասարանում, սեղանին, երբ աշակերտները մտնում են դասարան		
• գրատախտակի մոտ փակցված նկարներ • կպչան թղթեր • գրատախտակին գրված պետք է լինի դասի նպատակը		
Գնահատում Նկարագրեք՝ ինչպե՞ս պետք է չափեք աշակերտների առաջընթացը կամ դասի նպատակին հասնելը (առաջադրանք)		
Խառը հարցերի միջոցով կատարվում է գիտելիքների չափում, աշակերտներն ընթացքում խրախուսվում են, մոիվացվում և գնահատվում:		

Դասի սկիզբ (5 րոպե)		
Ուղղորդումներ պլանավորելու համար եւ **ՈՒՀՁ (UDL) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ**	Ուսուցչի գործողությունների նկարագրություն, հրահանգներ, հարցեր	Աշակերտների գործողությունների նկարագրություն
Ուղղորդումներ պլանավորելու համար 1. Վարքային եւ այլ սպասելիքների ներկայացում 2. Ի՞նչ են սովորելու աշակերտները	1.Դասի նախապատրաստում և երեխաների ուշադրության գրավում դասապրոցեսին 2. «Կռունկը»	1. Աշակերտները ներգրավվում են դասապրոցես

(դասի թեման եւ նպատակը) 3. Կարեւոր դրույթների ու բառապաշարի ներկայացում, որոնք օգտագործվելու են դասի ժամանակ 4. Ինչպե՞ս է դա կապվում նրանց նախկին գիտելիքների հետ: 5. Ինչպե՞ս է կապվում իրական կյանքի հետ: Ինչու՞ է դա կարևոր: 6. Ի՞նչ են պատրաստվում անել դասին: 7. Խթանիչ վարժություն (եթե կա) **ՈՒՀՋ (UDL) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ** -(1.2)/(1.3)Ապահովել այլընտրանքներ լսողական եւ տեսողական տեղեկատվության համար -(3.1)Ակտիվացնել արդեն առկա գիտելիքը կամ ապահովել անհարաժեշտ տեղեկատվություն՝ նոր նյութ մատուցելուց առաջ -(3.3) Ուղղորդեք տեղեկատվության գործառնության, մտապատկերման և այն հմտորեն կիրառելու գործունեությունը -(7.1) Բավարար հնարավորություններ անհատական ընտրություն կատարելու և ինքնուրույնության համար -(7.2) Ուսումնառությունը կապել սովորողների իրականության, և իրական կյանքի հետ՝ ընդգծելով սովորելու արժեքն ու կարևորությունը - (8.1) Ընդգծել և տեսանելի դարձնել նպատակների և վերջնարդյունքների կարևորությունը -(9.2) Զարգացնել դժվարություններն ինքնուրույն հաղթահարելու անձնային որակներն ու ռազմավարությունները	Ծանոթացնել չվող և ձմեռող թռչուններին, դաստիարակել հոգատորություն,բառապաշարը հարստացնել նոր բառերով 3. Հոգատար, ընտելանալ , ճիչ, ուժգին 4.Նախկինում նույնպես անդրադարձ է կատարվել տարվա եղանակներին, խոսվել է կենդանիների և թռչունների մասին , ինչպես նաև՝ նրանց նկատմամբ հոգատար վերաբերմունքի մասին: 5. Պետք է կենդանիների և թռչունների նկատմամբ հոգատար վերաբերմունք ցուցաբերոլ, քանի որ դրանք էլ բնության մի մասնիկ են, ինչպես մենք, օրինակներով բացատրել, որ առանց դրանց բությունը գոյություն ունենալ չի կարող 6. Գործողությունների նկարագրություն /քայլաշար, որը նախապես ասվում է երեխաներին՝ տնային աշխատանքի ստուգում, նյութի ընթերցում, հարց ու պատասխան, ինքնուրույն աշխատանք, հետադարձ կապ, մարզադադար/ 7.Տաձև աղյուսակուն նշել չվող և ձմեռող թռչուններին + + + +	ին 2.Ծանոթանում են <<Կռունկը>> դասին, կռունկի և որսորդի մասի նոր հասկացություններ 3. Յուրացնում են դասի հիմնական հասկացությունները, հիմնական միտքը 4.Անդրադարձ է կատարվում նախորդ թեմաներին, գնտում են նմանություններ և տարբերություններ, դուրս բերել առարկա և գործողություն ցույց տվող բառեր և այլն կազմել բառակապակցություններ և այն 5. Կապում են իրենց հանդիպած թռչուններ և եթե եղել է նման պատմությունն երիկ հետ 6.Կատարում են գործնական առաջադրանքներ, պատասխանում են հարցերին,

	+	իրականացնում են վերլուծություն, ինքնուրույն ստեղծագործական աշխատանք տալիս են հետադարձ կապ 7.Պատասխանում են խթանիչ հարցերին
Նոր Նյութի մատուցում (10 րոպե)		
Ուղղորդումներ պլանավորելու համար եւ **ՈՒՀՁ (UDL) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ**	Ուսուցչի գործողությունների նկարագրություն, հրահանգներ, հարցեր	Աշակերտների գործողությունների նկարագրություն, ակնկալվող պատասխաններ
Ուղղորդումներ պլանավորելու համար 1. Ի՞նչ են սովորում աշակերտները: 2. Ինչպե՞ս են սովորում այդ նյութը: 3. Արդյո՞ք նոր նյութը հանգում է կարևոր դրույթներին եւ տանում դեպի դասի նպատակը: **ՈՒՀՁ (UDL) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ** -(1.2)/(1.3) Ապահովել այլընտրանքներ լսողական եւ տեսողական	1.սովորում են «Կռունկը» պատմությունը, նոր բառեր և հասկացություններ և այլն 2. դիտման, ունկնդրման, ինքնուրույն աշխատանքի, ընթերցանության միջոցով 3. Դասի ընթացքում կիրառված բոլոր մեթոդներն ու առաջադրանքներն ուղղված են նպատակի և վերջնարդյունքի ապահովմանը	1. սովորում են, թե ինչպիսին կարող է լինել որսորդը , ինչ է նշանակում լինել հոգատար և բարի, որոշ բառերի ուղղագրությունը 2. Լսում են նոր նյութը, դիտում նկարներ, կատարում են ինքնուրոյն

տեղեկատվության համար -(2.1)/(2.2) **Պարզեցնել բառապաշարն ու սիմվոլները,** շարահյուսությունն ու լեզվական կառույցները -(2.3) Պարզեցնել մաթեմատիկական արտահայտությունները, բանաձևերը -(2.5) Ցուցադրել տեղեկությունը բազմազան միջոցներով -(3.1) Ակտիվացնել արդեն առկա գիտելիքը կամ ապահովել անհարաժեշտ տեղեկատվություն՝ նոր նյութ մատուցելուց առաջ -(3.2) Ընդգծել կաղապարները, կարևոր հասկացությունները, դրանց միջև գոյություն ունեցող կապերը -(3.3) Ուղղորդեք տեղեկատվության գործառնության, մտապատկերման և այն հմտորեն կիրառելու գործունեությունը -(5.1) Կիրառել հաղորդակցության տարբեր/բազմաթիվ միջոցներ -(6.2) Աջակցել պլանավորման ու ռազմավարությունների զարգացման գործընթացին -(6.4) Զարգացնել առաջընթացի մշտադիտարկման կարողությունը -(7.2) Ուսումնառությունը կապել սովորողների իրականության, և իրական կյանքի հետ՝ ընդգծելով սովորելու արժեքն ու կարևորությունը	+ + +	աշխատանք, պատասխանում են հարցերին, կապում են իրենց կյանք հետ, կատարում են վարլուծական աշխատանք 3.Բոլոր առաջադրանքների կատարման արդյունքում ապահովվում են դասի վերջնարդյունքները
Ուղղորդված աշխատանք (15 րոպե)		
Ուղղորդումներ պլանավորելու համար **ՈՒՀՋ (UDL) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ**	Ուսուցչի գործողությունների նկարագրություն, հրահանգներ, հարցեր	Աշակերտների գործողությունների նկարագրություն, ակնկալվող պատասխաններ
Ուղղորդումներ պլանավորելու համար 1.Ի՞նչ հնարավորություն է տրվում աշակերտներին աշխատելու: 2.Արդյո՞ք այդ աշխատանքը վերահսկվում, աշակերտներին օգնություն է տրվում: 3.Արդյո՞ք ներկայացված նոր նյութը պատրաստել է աշակերտներին աշխատելու	1. Աշակերտներին տրվում է խոսելու, կարծիք և մտքեր արտահայտելու, իրավունք և հնարավորություն 2. Ցանկցած դեպքում աշխատանքները վերահսկվում և ուղղորդվում են ուսուցչի կողմից 3. Նոր նյութը միտված է	1.Աշակերտներն ակտիվ մասնակցում են դասին, ուղղում հարցեր, հայտնում

4.Կան սպասելիքներ լսելու, մասնակցելու մյուսներին օգնելու: 5.Արդյո՞ք կատարվող գործողությունները կազմակերպված են: **ՈՒՀՁ (UDL) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ** -(1.2)/(1.3) Ապահովել այլընտրանքներ լսողական եւ տեսողական տեղեկատվության համար -(2.1)/(2.2) **Պարզեցնել բառապաշարն ու սիմվոլները,** շարահյուսությունն ու լեզվական կառույցները -(3.2) Ընդգծել կաղապարները, կարևոր հասկացությունները, դրանց միջև գոյություն ունեցող կապերը -(4.1) Տարբերակել ֆիզիկական միջավայրում ուղղորդվելու և պատասխանելու մեթոդները -(6.2) Աջակցել պլանավորման ու ռազմավարությունների զարգացման գործընթացին -(6.3) Դյուրացնել և օժանդակել տեղեկատվության և ռեսուրսների ղեկավարումը -(7.2) Ուսումնառությունը կապել սովորողների իրականության, և իրական կյանքի հետ՝ ընդգծելով սովորելու արժեքն ու կարևորությունը -(8.3) Խրախուսել համագործակցությունն ու հաղորդակցությունը -(8.4) Տրամադրել դեպի կատարյալն ու ավելի լավն ուղղորդող հետադարձ կապ	աշակերտներին մոտիվացնելուն, 4. Ստեղծվում են նպաստավոր պայմաններ աշակերտների համագործակցության և մասնակցության ապահովման համար: 5. Գործողությունները փոխկապված են և հաջորդում են միմյանց + + +	կարծիքներ, անում առաջարկություններ, 2. Աշխատանքները վերահսկվում և ուղղորդվում են, 3. Աշակերտները ակտիվ մասնակցում են դասին և ցուցաբերում մեծ հետաքրքրություն 4. Հարկ եղած դեպքում աշակերտները համագործակցում են, օգնում ընկերների, լրացնում են մեկը մյուսին 5. Բոլոր գործողությունները փոխկապակցված են
Ինքնուրույն աշխատանք (5 րոպե)		
Ուղղորդումներ պլանավորելու համար եւ **ՈՒՀՁ (UDL) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ**	Ուսուցչի գործողությունների նկարագրություն, հրահանգներ, հարցեր	Աշակերտների գործողությունների

		նկարագրություն
Ուղղորդումներ պլանավորելու համար 1.Ինչպե՞ս է ուսուցիչը հնարավորություն տալիս աշակերտներին ինքնուրույն աշխատելու: 2.Ի՞նչ վարժություն, առաջադրանք է պատրաստված աշակերտների ինքնուրույն աշխատանքի համար **ՈՒՀՋ (UDL) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ** -(1.2)/(1.3) Ապահովել այլընտրանքներ լսողական եւ տեսողական տեղեկատվության համար -(2.1)/(2.2) **Պարզեցնել բառապաշարն ու սիմվոլները,** շարահյուսությունն ու լեզվական կառույցները -(2.5) Ցուցադրել տեղեկությունը բազմազան միջոցներով -(3.2) Ընդգծել կաղապարները, կարևոր հասկացությունները, դրանց միջև գոյություն ունեցող կապերը -(3.3) Ուղղորդեք տեղեկատվության գործառնության, մտապատկերման և այն հմտորեն կիրառելու գործունեությունը -(9.1) Խթանել մոտիվացիան բարձր ակնկալիքների և հավատալիքների միջոցով -(9.2) Զարգացնել դժվարություններն ինքնուրույն հաղթահարելու անձնային որակներն ու ռազմավարությունները	1.Հնարավորություն է ստեղծում ինքնուրույն աշխատանքի համար՝ նախապես պլանավորած աշխատանքի շնորհիվ 2. նախապես նախապատրաստած գունավոր թղթեր, ատիտներ,կպչան թղթեր, որոնք միտված են աշակերտի աշխատանքը հետաքրքիր դարձնելուն, ստեղծագործականությունը զարգացնելուն, սովորածն ամրապնդելուն: + +	1. Կատարում են հանձնարարված առաջադրանքները 2. Հորինում են հանելուկներ կամ կատարում նկարագրություն
Դասի ամփոփում (5 րոպե)		
Ուղղորդումներ պլանավորելու համար եւ	Ուսուցչի գործողությունների	Աշակերտների

ՈՒՀՁ (UDL) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ	նկարագրություն, հրահանգներ, հարցեր	գործողությունների նկարագրություն, ակնկալվող պատասխաններ
Ուղղորդումներ պլանավորելու համար **1. Ինչպե՞ս է կատարվում անդրադարձ կարեւոր դրույթներին ու դասի նպատակներին** **2. Ինչպես է կատարվում քննարկում սովորածի կարեւորության եւ հետագա կիրառելիության մասին** **3. Ի՞նչ անդրադարձ է կատարվում աշակերտների վարքին եւ կատարողականին (գնահատում/ խրախուսանք), ինչպե՞ս է դասին հետադարձ կապ տրվում** ՈՒՀՁ (UDL) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ -(3.2) Ընդգծել կաղապարները, կարևոր հասկացությունները, դրանց միջև գոյություն ունեցող կապերը -(5.2) Օգտագործել ուսունառության վերջնարդյունքի ձեւավորման եւ ստեղծման բազմապիսի միջոցներ -(6.4) Զարգացնել առաջընթացի մշտադիտարկման կարողությունը -(8.1) Ընդգծել և տեսանելի դարձնել նպատակների և վերջնարդյունքների կարևորությունը -(9.3) Զարգացնել ինքնագնահատման ու վերլուծական ինքնանդրադարձ կատարելու ունակությունները	1. Նախապես մշակված հարցերի միջոցով, ամփոփվում է դասը և անդրադարձ է կատարվում նպատակին և վերջնարդյունքներին 2. Հարցերի միջոցով պարզում ենք, թե որտեղ կարող են կիրառել իրենց սովորածը 3. Աշակերտները խրախուսվում են և գնահատվում: Հետադարձ կապը տրվում է բանավոր + + +	1.Աշակերտները պատասխանում են ամփոփիչ հարցերին 2. Նշում են, թե որտեղ կարող են այն կիրառել և որքանով է սովորածը կարևոր, պատասխանում են քառաբաժանի հարցերին 3. Խրախուսվում են և իրականացնում հետադարձ կապ /դուր եկավ այս կամ այն առաջադրանքը, դժվարացա այս կամ այն հարցում և այլն/